

Բարև, սիրելի՛ Գոհար,

Ուրախացա, որ ինձ արժանացրել ես «ընկեր» պատվավոր կոչմանը: Կարդալով ձեր նամակը՝ հասկացա, որ նույն մտածելակերպն ունենք, ու մեր ցանկությունը նույնն է՝ խաղաղություն: Դուք արդեն նշել եք, որ խաղաղության հաստատումից հետո մենք կարող ենք հասնել խաղաղ երկնքի, ուրախության, երջանկության ու բարգավաճման: Ադրբեջանն ու Հայաստանը հարևան երկրներ են: Նման դժվար քաղաքական իրավիճակում գտնվող ժողովուրդը զուրկ է մի շարք «արտոնություններից»: Մենք չենք կարողանում շրջագայել: Հայաստանն ու Ադրբեջանը շատ գեղեցիկ վայրեր ունեն, որոնք տեսնել է պետք: Մեզնից ոմանք չեն կարողանում տեսնել անգամ իրենց ծննդավայրերը:

Մենք զրկվում ենք նաև ընկերներից: Այժմ որոշ հանգամանքների բերումով թշնամու աչքով միմյանց նայող մարդիկ մի ժամանակ ընկերներ են եղել և ապագայում կարող են կրկին ընկերներ լինել: Մինչ մենք կկարողանանք միմյանց վստահել, կանցնեն տարիներ: Ես մի փոքր շրջանից եմ, որտեղ Խորհրդային միության շրջանում հայեր էլ են ապրել: Բնակչությունը խաղաղ է ապրել, սակայն 90-ականների դեպքերից հետո ատելություն ի հայտ եկավ: Հայերը լքում էին ադրբեջանական հողերը, թողնում ու լքում էին այն տները, որտեղ տարիներ շարունակ ապրել էին, սակայն ոչ բոլորը, ոմանք դրա հետ չհամակերպվեցին, փոխեցին իրենց անուններն ու մնացին իրենց հարազատ հողում:

Մայրիկիս դպրոցական նկարները նայելիս մի քանի նկար գտա, որտեղ երեխաների դեմքերը պատռված էին: Հետո իմացա, որ մայրիկիս դասարանում հայ երեխաներ են սովորել և ժամանակին որպես ընկեր ընդունած երեխաներին փորձել է հանել իր կյանքից ու հուշերից: Դատեղի է ունեցել 1989–1990-ականների դեպքերի պատճառով, սակայն փոխվեց դեռահաս պատանու միտքը, ճանաչած մարդկանց մասին կարծիքը, այլևս նրանց նկատմամբ վստահություն չկար:

Քանի որ պատերազմական իրավիճակում ենք, կորցնում ենք նաև գիտելիքների առումով: Փորձի փոխանակումը ամենալավ ճանապարհն է, սակայն աշխարհագրորեն ու էթնիկակապես մեզ մոտ կանգնած երկրի հետ չենք կարողանում կիսել մեր գիտելիքները:

Ջենքի և սահմանների պաշտպանության վրա շատ գումար ենք ծախսում: Եթե այդ միջոցները ՋԵՆՔԻ վրա չծախսենք, դժվար չէ պատկերացնել, թե ինչպես կարող են փոխվել բժշկությունը, կրթությունը և այլ ոլորտներ:

Ո՞ր ճանապարհներն են տանում դեպի խաղաղություն: Այս հարցը կար ձեր նամակում, սակայն դրա պատասխանը գտնելը դժվար է: Կարծում եմ՝ գլխավորը բնակչությունն է: Առաջին ճանապարհը մենք կառուցեցինք, և վստահ եմ, որ ձեզ ու ինձ պես մարդիկ քիչ չեն: Դուք նշում եք կարծրատիպերի մասին: Ցավոք, դրանք կոտրելը շատ դժվար է: Ընկերոջս հայրը Քելբաջարը լքած վերջին մարդկանցից է: Նրա քույրերն ասել են, որ չեն լքելու հայրենի հողերն ու բարձրացել են սարերը. նրանց մասին դեռևս ոչ մի տեղեկություն չկա: Այդ ընտանիքն ինչպե՞ս կոտրի իր կարծրատիպերը, ինչպե՞ս

հավատա խաղաղությանը: Քելբաջարը լքելուց հետո իրենց տներում 20 տարի ապրող մարդուն (հային) ինչպե՞ս վերաբերվի ընկերաբար: Այդ մարդիկ դեռևս պահում են Քելբաջարի իրենց տան բանալիները՝ հույսով, որ մի օր կվերադառնան իրենց տները: Այդ մարդկանց համար խաղաղությանը հավատալը, նրանց խաղաղություն քարոզելը շատ դժվար է:

Վստահ եմ, որ նմանատիպ պատմություններ ձեզ մոտ էլ շատ կան, սիրելի՛ ընկեր: Կարծրատիպերը ոչնչացնելը, միմյանց համակերպվելն ու վստահելը մեր առջև դրված ամենաբարդ գործն է: Դա ժամանակատար է լինելու, և վստահ եմ՝ մենք կկարողանանք պատվով կատարել այն: Հաջորդ սերունդը ստիպված չի լինելու իր մտքերն արտահայտել նամակների միջոցով, այլ ամեն բան կարողանալու են ասել անձամբ:

*Խաղաղությունը խոսքի, մտքի, շարժման ազատությունն է:*

*Խաղաղությունը հաշտություն ու հանդարտություն է:*

*Խաղաղությունն ուրախություն է:*